

Գիտություն

ՀՈՒՆՎԱՐ

№ 1

(337)

2020 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Շրտարակվում է 1993 թ. փետրվարից



Դու տարաբախտ իմ ժողովուրդ,
Օկորցնես երազդ սուրբ
Թեկուզ ցնդեն պատրանքների
Ու խեղդեն քեզ սադրանքները,
Ծիծաղելը չմոռանաս,
Եվ հողմերից չկորանաս,
Անթեք, ամուր պահիր կամքդ,
Շագարամյա հզոր կյանքդ:

Մկրտիչ ՍԱՐԳՍՅԱՆ




«Օրհնվի էն սիսթը, որ Ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ, ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնունը շունչ կա, պետք է գիշեր ցերեկ մեր քաշած օրերը մտքըներս բերենք ու Ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, Աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց...»:

ՉՄՈՒՄՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԴՎԱՍԵՐԸ

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ՄԵՐ ՄԻՐԱՆՔՆԵՐԻ ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊՆ Է



Համո ՍԱՀՅԱՆ

«Վերք Հայաստանի»-ն սովորական առունով գիրք չէ, իհարկե, նա վերք է իրոք՝ հայ մեծադժբախտ ժողովրդի դարավոր վերքը՝ ստացած թուրք, արաբ, ղզլբաշ բարբարոս, արյունարբու հորդաններից և նրանց իշխաններից:

Նա գիրք չէ. նա սիրտ է, տարերային զգացմունքներով զեղուն, ահագին սիրտ՝ Արարատյան նվիրական դաշտի վրա փռված, ըմբոստ, զայրալից և վշտագին, Մասիսի բարձունքների վրա վառվող, միացող սիրտ... «Վերք Հայաստանի»-ն նաև մեր բողոքի, մեր ըմբոստության, մեր գոյամարտի հերոսապատումն է: Նա մեր դարի շողշողուն էպոսն է,

մեր սխրագործությունների դյուցազնավեպը: Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները: Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եղիշեի Վարդանանց պատմությունը, Նարեկացու խոսքը անմահության և հավերժության հետ և Աբովյանի «Վերքը»: Այս նվիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտված է մեր ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի պաթոսը:

ՕՐՀԱՌԻՄ ԵՆՔ և ԱՄՈՒՄ ԵՆՔ...



Միշտ էլ սարսափի պես մի բան եմ զգացել մեր ժողովրդի մասին խոսք ասելուց առաջ... վախեցել եմ, որովհետեւ նրանք հոգնակի խարխուս են, հոգնամիտ, հոգնագազաթ և հոգնահորիզոն:

Նրանք՝ այդ մեծերը, միայն իրենց ժամանակի վկաներն ու տարեգիրները չեն, այլ նաև իրենց ժողովրդի անցած ճանապարհի պատմիչ-պատմաբանները, ժողովրդի՝ մեկ անհատի մեջ խորացված, մարմնավորված պատմությունը և նրա՝ ժողովրդի ապագան գուշակող մարգա-

րենները: Խոսքս այսօր մեծերից մեծի՝ Խաչատուր Աբովյանի մասին է: Աբովյանի մեջ խտացված են Մաշտոցի դիվանագիտական հանճարը, Խորենացու հայրենասիրական կրակը, Նարեկացու կատարելության աղոթքը: Աբովյանը մեր ազգային ոգու մարմնացումն է: Եվ եթե ինչ-որ չափով հաղորդվել են այդ ոգուն և իմ մեջ կրում եմ այդ ոգու մասունքները, դրա համար պարտական եմ մեր ժողովրդի մեծերից մեկի՝ Աբովյանի ժառանգությանը: Ի՞նչ էր ուզում Աբովյանը: Ինքն իրեն լուսավորած, եվրոպական քաղաքակրթությանը քաջատեղյակ, եվրոպական մշակույթը, արվեստն ու գրականությունը յուրացրած-մարսած, իր ազգի վերքի նրմուռը սրտում մի մարդ... Ուզում էր, որ իր ժողովուրդը շարտի պարսկական կործանարար, ստորացնող լուծը և դառնա իր հողի, իր երդի, իր խոփ ու կամի տերը: Տերը դառնա իր պատմության, իր անցյալի մեծագործությունների, իր պատվի, իր իրավունքի և իր ինքնության տերը: Նա ուզում էր, որ իր ժողովուրդը քաղաքակրթվի, լուսավորվի, բարձրանա, քայլ պահի աշխարհի քաղաքակրթ ազգերի հետ, սովորի նրանցից և նրանց սովորեցնի իրեն: Նա ճանաչում էր իր ժողովրդին, գիտեր, որ իր ժողովուրդն ի վիճակի է այդ անելու, եթե ունենա մի ու-

ծեղ թիկունք, ուժեղ հովանի: Եվ կար հովանի... Հյուսիսի մեծ հսկան էր, որի գորագնդերն արդեն շարժվում էին հարավ, և օրհնեց նրանց մուտքը Հայաստան: Նա գիտեր, որ ժողովրդի ինքնության առաջին երաշխիքը և հիմքը նրա լեզուն է. - Չեզ են ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդը, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք... Ձեր երեսին դուրբան, հողումն էլ ըլեն, եկե՛ք, վրես կանգնեցե՛ք, թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա՝ անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք... Կարդում ես ու չես իմանում մեկուկես հարյուրամյակ առաջ է ասված, թե այսօր առավոտ: Եկել, կանգնել ենք քո արձանի առաջ և օրհնում ենք քեզ և ասում ենք. ով մեծ մարգարե, մենք մեր լեզուն պահել-պահպանել ենք և մեր ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ, մեր շենք ու շնորհով, մեր ազատ թռիչքներով մտել ենք աշխարհի քաղաքակրթ ազգերի շարքը: Եվ նորից ենք ասում, որ քո հոգին թևահարում է համայն Հայաստանի և հայության վրա, բոլոր հայ մանուկների օրորոցների վրա: Եվ էլի ենք ասում, որ քեզ պես վառվունք տղա և քեզ պես իմաստուն հայր ունեցող ժողովուրդը իր գոյատևության վրա կասկածելու իրավունք չունի, նա քո մեծ հետնորդի ու մեծ մեկնաբանի՝ Հովհաննես Թումանյանի խոսքով աշխարհին պիտի ասի. - Ես եղել եմ, կամ, կլինեմ, հար ու հավետ, ինչ կա որ...

ՆՈՒՅԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ - 2019

Ֆիզիկայի բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են դարձել Ջեյմս Փիբլզը՝ «ֆիզիկական տիեզերաբանության ոլորտում տեսական հայտնագործությունների համար», Միշել Մայորը և Դիդիե Բելոյը՝ «արևանման աստղի ուղեծրում էկզոմոլորակների հայտնաբերման համար»:

Ջեյմս Փիբլզ

Դիդիե Բելոյ

Միշել Մայոր



Քիմիայի գծով Նոբելյան մրցանակ ստացել են Ջոն Գուդենաֆը, Սթենլի Ռոֆինհենը և Ակիրա Յոշիմուն՝ լիթիումաիոնային մարտկոցների մշակման համար:

Ջոն Գուդենաֆ

Սթենլի Ռոֆինհեն

Ակիրա Յոշիմուն



Ֆիզիոլոգիայի և բժշկության ասպարեզում Նոբելյան մրցանակը շնորհվել է Ուիլյամ Բեյլինին, Պիտեր Ռատկլիֆին ու Գրեգ Սենենցային այն հայտնագործության համար, թե ինչպես են կենդանի բջիջներն արձագանքում թվածման ներկայությանը:

Ուիլյամ Բեյլին

Պիտեր Ռատկլիֆ

Գրեգ Սենենցա



Տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակ են արժանացել տնտեսագետներ Աբիջիթ Բաներջը, Էսթեր Դյուֆլուն և Մայքլ Կրեմերը՝ աղքատության դեմ պայքարում ներդրած ջանքերի համար:

Աբիջիթ Բաներջ

Էսթեր Դյուֆլուն

Մայքլ Կրեմեր



Գրականության բնագավառում ընտրվել է Նոբելյան 2 դափնեկիր, քանի որ 2018-ին սեռական ոտնձգությունների հետ կապված սկանդալի ֆոնին մրցանակ չի շնորհվել:

2018 թ. Նոբելյան մրցանակը շնորհվել է լեի բանաստեղծուհի Օլգա Տոկարչուկին, իսկ 2019-ինը՝ ավստրիացի գրող Պետեր Հանդկեին: Օ. Տոկարչուկը մրցանակը ստացել է «պատմողական երևակայության համար, որը հանրագիտարանային կրթով ներկայացնում է սահմանների հատումը որպես կյանքի ձև», իսկ Պ. Հանդկեն՝ «մարդկային գոյության սահմաններն ու առանձնահատկությունները հետազոտող ազդեցիկ աշխատանքի համար»:

Պետեր Հանդկե

Օլգա Տոկարչուկ



Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է Եթովպիայի վարչապետ Աբիյ Ահմեդին՝ հարևան երիթրեայի հետ հակամարտությունը կարգավորելու գործում ներդրած ջանքերի համար:



Աբիյ Ահմեդ



Երկարատև հիվանդությունից հետո Իթակայի (Նյու Յորք) իր տանը 80 տարեկանում նոյեմբերի 25-ին վախճանվել է Կոռնելի համալսարանի աստղագիտության բաժանմունքի 1979-99 թվերի ամբիոնի վարիչ, ճանաչված աստղագետ, դոկտոր Երվանդ Թերզյանը:

Թերզյանը ծնվել էր Ալեքսանդրիայում (Եգիպտոս) մանր առևտրական Պետրոս Թերզյանի և կնոջը՝ Մարիա Կիրյակաքիի համեստ ընտանիքում: Պետրոսը ցեղասպանությունից

մազապուրծ մի կերպ հասել էր Եգիպտոս, իսկ Մարիան հունական փոքրիկ կղզիներից մեկում ապրող ձկնորսի դուստրն էր:

Տաղանդավոր և նպատակասլաց երիտասարդը վաղ տարիքից է մտադրվել դառնալ աստղագետ: 17 տարեկանին ընդունվել է Կահիրեի ամերիկյան համալսարանը, որից հետո հաղթահարելով 1952-ի հեղափոխության հետևանքում ստեղծված որոշ դժվարություններ՝ կարողացել է մասնակցել Բլումինգտոնի (ԱՄՆ) Ինդիանա

Վախճանվել է ամերիկահայ հռչակավոր աստղագետ, ԸՇ ԳԱԱ արտասահմանյան անդամ, դոկտոր Երվանդ Թերզյանը

համալսարանի աստղաֆիզիկայի բնագավառում դոկտորականի գիտական աստիճան շնորհող ծրագրին, որը հաջողությամբ ավարտել է 1965-ին: Նույն տարում նա ընդգրկվել է մորակառույց և Կոռնելի համալսարանի կողմից կառավարվող «Arecibo» աստղադիտարանի (Պուերտո Ռիկո) գիտական աշխատակազմում, որից հետո մինչև իր կյանքի վերջը համագործակցել է Կոռնելի համալսարանի հետ: 1967-ին այնտեղ աստղագիտություն է դասավանդել նախ որպես պրոֆեսորի օգնական, ապա որպես պրոֆեսոր: Արժանացել է «Գերագանց դասավանդման» համար նախատեսված մրցանակին: Յեղիմակ կամ համահեղինակ է 235-ից ավելի գիտական հոդվածների: Խմբագրել է յոթ գիրք,


որոնց թվում է «Կառլ Սագանի Տիեզերքը»: 1979-ին նշանակվել է Կոռնելի համալսարանի աստղագիտության ամբիոնի վարիչ, որի ընթացքում հիմնել է համալսարանի շրջանավարտներից կազմված «Աստղագիտության բարեկամներ» (FoA) ընկերությունը, որը մեծապես նպաստել է համալսարանի այդ բաժանմունքի գործունեությանը:

Թերզյանը տասը տարի (սկսած 1989-ից) խմբագրել է «Astrophysical Journal» հանդեսը: 2002-ին ընտրվել է համալսարանների և ինստիտուտների ամերիկյան կոնսորցիումի վարիչ-ղեկավար: Նա մշտապես հպարտ է եղել իր հայկական և հունական ժառանգությամբ: Հիմնադիր անդամներից է եղել հունական և հայկական աստղագիտական

ընկերությունների: Արժանացել է Ինդիանայի, Հայաստանի և Թեսալոնիկի համալսարանների պատվավոր դոկտորի գիտական աստիճանների: Ընտրվել է ՀՀ ԳԱԱ-ի արտասահմանյան անդամ: 2008-ին արժանացել է ՀՀ կառավարության ոսկե մեդալին, իսկ 2018-ին՝ NASA-ի բարձրագույն մրցանակին:

Մարգասեր է եղել և շատ է ճանապարհորդել: Մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հայկական և հունական երաժշտության ու խոհանոցի հանդեպ: Հուղարկավորությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 6-ին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը խորապես ցավակցում է նշանավոր աստղագետի բոլոր հարազատներին:



ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Կորցնելով ռուսական մշակութային դաշտը, մենք կորցնում ենք ամեն ինչ...

ՎԵՐՁԻՆ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՈՒՄ

(Սկիզբը նախորդ համարում)

Ձավակները չեն կարող ապագա ունենալ, եթե չգիտեն ու տեր չեն իրենց պապերի պատմությունը: Այդ առումով հրաշք է Ռազմիկ Դավոյանի քառատողը:

Իսկ եթե հանկարծ քո ճանապարհին Նախապապերիդ դու չհանդիպես, Ուրեմն սխալ ճամփով ես գնում, եվ ոչ մի հրաշք չի փրկելու քեզ: - Սոս, սիրելիս, Վահրամ Փափազյանն ասում էր, որ Հայաստան աշխարհը աղբամոցում ընկած մի մարգարիտի է նման:

Միայն վերջին երկու տասնամյակում ես հասկացա, թե ինչ է ցանկացել ասել մեծ արտիստը, աշխարհագրական անբարենպաստ դիրք, ասպատակություններ դարեր շարունակ, ինքներս մեզ թերագնահատելը, պատմական դառը անցքերից եզրահանգումներ չանելը, նախանձը, չարաթյունը և այլն, և այլն... Մեծ արտիստի ասածը Դուք ինչպե՞ս կմեկնաբանեք:

- Ես դժվարանում եմ հակիրճ մեկնաբանել կամ ստույգ պատասխան տալ: Մի փոքր էքսկուրս:

1960-ականներին սկսվեց հայ մշակույթի, կինոյի, գիտության, ճարտարապետության, արդյունաբերության ծաղկումը: 60-ականները հայոց ռենեսանսն էր: Անունների թվարկումը շատ երկար կտևի. Վիկտոր Համբարձումյանից սկսած մինչև Համո Սահյան: Բոլորին անհնար է թվարկել: Եվ այդ ժամանակ էր, որ հայ ազգը իր մեջը ուղղեց: Հիմա Փափազյանի ասածը՝ որ Հայոց աշխարհը քո գոհար է, դա փաստ է: Աշխարհագրական դիրքի խնդիրը բոլոր հարցերի պատասխանը չի կարող տալ: Պղտոր ալիքի պես ներխուժեց և վերցրեց մեզ ոչ հատուկ եսահիրությունը, ընչաբաղդությունը, անբարյացակամությունը և հազար ու մի նմանատիպ բաներ:

Երբեմն պատահում է ռեստորան եմ գնում, տեսնում 4-5 բարեկիրք երիտասարդ միասին հաց են ուտում: Ուրիշությունն ինչ հուզվում եմ: Ուրեմն, մեր հին ավանդույթը՝ միասին մի կտոր հաց կիսելը, պահպանվել է, դա մեծ բան է: Հովհաննես Թումանյանը Ալեքսանդր Մյասնիկյանին հանդիպելիս ասաց. «Երկու բան պիտի խնդրեմ, առաջինը՝ դաշնակներին մի հետապնդիր, որովհետև դուք չկայիք, նրանք կային: Դուք լինեիք, ժողովուրդը ձեզ հետ կլիներ: Եվ երկրորդը՝ թամաղայությունը չարգելեք»: Թումանյանը նկատի չուներ խոսելը, նա նկատի ուներ միասնությունը: Երբ մի խումբ հայեր հավաքված իրար լավ լավ բաներ են ասում, մեկը մյուսին դրվատում է...

«Ամեն մի հայ դա դու ես», - ասում էր Գարեգին Նժդեհը:

Մեր ամենամեծ թշնամին այսօր չի մացությունն է: Աշխարհը էնպիսի մի թափով է առաջ գնում, որ մենք իրավունք չունենք ամենատարրական բաները չիմանալու: Մեր թշնամին տգիտությունն է: Տգիտությունն ահավոր մի բան է՝ համայն մարդկության չարիքների պատճառը: Եթե մենք տգետ լինենք, մեզանից դուրս եկած դեկավարն էլ կարող է տգետ լինել: Տգետ մարդը անհաղթահարելի է: Եթե տգետին պաշտոն ես տալիս, դա սոսկալի մի երևույթ է:

- Ես շատ կուզեի Ձեզ հետ անդրադառնալ հասարակական այս կացությանը, սխտեմին: Ինչ համակարգ ուզում է լինի, միևնույն է, մարդ արարածն անկուշտ է և ազատ: Նրա սանձերը պետք է պահեք. Ո՞վ՞ չգիտեն: Դա

կարող ենք անվանել պետություն, թե մեկ այլ ուժ, չգիտեն... Մի անգամ Հովհաննես Հիրազն իրեն հատուկ բորբոքված տոնով ասաց. «Ոչ թե ուսուցչին պետք է փոխել, այլ՝ դասագիրքը»: Խորհմաստ է: Իմ կարծիքով այս հասարակարգը, սխտեմը անբարո է... Կարծում եմ, այս սխտեմն աշխարհում իրեն սպառել է: Հիմա էլ այդ անհայրենիք գլոբալիզացիան, որն իր ճանապարհին սրբում, տանում է ազգային ու նրան առնչվող ամեն մի լավ բան: Կամաց-կամաց մոլորակը դեկավարում են բանկերն ու նրանց տնօրենները: Հետո՞... հետո ո՞նց է դիմակայելու այս ամենին մեր ժողովուրդը, ո՞րն է ելքը:

- Այդ հարցի միայն մի փոքր մասին կարող եմ անդրադառնալ: Մի քանի օր առաջ մի տիկին ինձ գանգեց և շատ խիստ ծայրով ասաց. «Դուք դաշնակցակա՞ն եք», ասացի՝ այո, իսկ դուք ձեր ելույթում ասացիք, որ ազատությանը դեմ եք և մուլմիսկ նախագահին շնորհավորում եք: Ոչ մի բան չհասցրի ասել, որովհետև հեռախոսը անջատվեց: Հիմա եմ ուզում ասել.

- Իհարկե, քույրիկ ջան, ես ոչ միայն ազատությանն եմ դեմ, ես դեմ եմ այն դեմոկրատիային, որն օրինակաճանցում է երկու տղամարդու ամուսնությունը: Եվ դա

բավական չէ, նրանց իրավունք են տալիս երեխա որդեգրել:

Դու գիտես, դա հակասաբանություն, սոսկալի, անմարդկային, չլաված, չտեսնված բան է, - գրեթե գոռալով ասում է նա:

- Ի՞նչ ասեմ, էդ տղան պիտի մեծանա ու իրենց նման դառնա: Դա մեր վերջի սկիզբն է, եթե էսպես շարունակվի, մեր պետության կործանման սկիզբն է: Նրանց պետք է արմատախիլ անել, վարակի էդ բները պետք է ոչնչացնել: Եվ ցավ չէ, որ դրա համար բանտ կարող են նստել: Հետո մարդկությունն այս դեմոկրատիայի ձեռնի կրակն է ընկել: Ամեն ինչում պիտի կարգ ու կանոն լինի: Գիտե՞ք, վայրի ցեղերը ինչպես դարձան պետություն: Տաբուի շնորհիվ, տաբու, ասել է թե արգելի շնորհիվ: Մերձավորի հետ չի կարելի ամուսնանալ, որովհետև այլանդակներ են ծնվում, գողանալ չի կարելի, ես չի կարելի, էն չի կարելի ասելով ստեղծեցին պետություն: Իսկ պետությունը, որտեղ ամեն ինչ կարելի է, դա պետություն չի, դա արդեն հասարակարգ չի: Դա անհովիվ մի նախիր է: Գիտե՞ք ինչ, ես մի առիթով էլ եմ ասել, մարդկությունը դեկավարվել է չգրված օրենքներով:

Ոչ ոք ինձ չի ասում, որ եթե հարազատը մահացել է, գնա թաղման, բայց ես գնում եմ: Դա գրված չէ: Ոչ ոք չի ասում, որ եթե չգնաս հարսանիքի, քեզ կպատժենք: Կան չգրված օրենքներ, որ պետք է հետևես դրանց: Պրոպետեր Մերիմեն մի պատմվածք ունի, որտեղ տղան դավաճանում է հորը, իսկ հայրը դավաճանության համար սպանում է որդուն: Տարսա Բուլբան իր տղային ասաց. «Ես քեզ ծնել եմ, ես քեզ կսպանեմ»: Այսինքն՝ մարդիկ սա ասել են, որ կարգը պահպանեն:

- Դեռևս 1970-ական թվականներին, երբ անկախ պետականության մասին մտքներով չէր անցնում, մի անգամ Հենրիկ Մալյանն ասաց, որ այնքան կուզեմար, որ հայ-վրացական մի պետություն ստեղծվեր, իսկ երևանի ու Թբիլիսիի մոտերի մոտ իրար հավասար, ձեռքերը մեկնեկու ուսին դրած, թիկնեղ ու գեղեցիկ հայի և վրացու քանդակ տեսներ: Ու հարցական հայացքով ինձ նայեց: Այդ ժամանակ ես նրան ասացի, որ քանդակի գաղափարը լավ է, բայց միացյալ պետությունը՝ ոչ:

- Ինչո՞ւ, - իրեն հատուկ տոնով հարցրեց Մալյանը: Պատասխանեցի, որ հայերս կպնդենք, որ սկզբում հայ-վրացական գրվի, վրացիները կպնդեն՝ վրաց-հայկական:

Ճպտաց, լռեց ու մի տեսակ մտքերի մեջ ընկավ: Թե ինչ էր մտածում, միայն կռահել կարելի էր: Հիմա, եթե ոչ պետություն, ապա գոնե իրար թև-թիկունք պիտի դառնա՞նք, թե՞ ոչ:

Հիմա Վրաստանում ուրիշ կառավարություն է, կարծես կապերը նորոգվում են, Կովկասի քրիստոնյա այս երկու ժողովրդի՝ հայերի և վրացիների միջև սեպ խորոզներ շատ կան, հատկապես մեզ համար պարզ դարձած երրորդ ուժը:

- Շատ բարդ խնդիր է: Իմ կարծիքով վրացիները սխալ ճանապարհ են ընտրել: Հենրիկի երազած պետությունը շատ բնական երևույթ կլիներ, քանի որ և՛ մենք, և՛ վրացիները շրջապատված ենք մահմեդականներով:

Բայց վրացիները շատ տարօրինակ են պահում իրենց: Գիտե՞ք ես ինչ եմ մտածում, գուցեև սխալվում եմ, որ Վրաստանում մեր դեմ են. այսպես կոչված՝ շուռ տված

հայերը, վրացի դարձած հայերը: Դավանափոխ հայը, ազգափոխ եղածը սոսկալի երևույթ է:

Եթե նա (ոչ բռնի ուժով) իր սեփական արյանը դավաճանել է, ամեն ստորությամբ էլ ընդունակ է: Եվ այդ նրանք են, որ իրենց հայոց հետքերը կորցնելու համար տասն անգամ ավելի վրացի են, քան սովորական վրացին: Ես այդ խոսակցությունն ունեցել եմ նաև Լորդկի-պանիձեի հետ: Երբ նկարահանվում էի, մեր խմբում դրանցից մեկը կար, ուղղակի հերս անիծում էր: Վերջը պարզվեց, որ (մի փոր հացի համար) շուռ տված հայ է, մի իսկական տակաճ:

Սա մեկ: Աշխարհն այժմ կանգնած է ընտրության առաջ: Իսլամն այսօր ավելի առողջ, կենսունակ է, դա մենք պետք է ընդունենք: Նրանք հարձակման մոր ձև են ընտրել, ոչ թե կռվել, այլ բուժվել՝ տասից ավելի երեխաներ ունենալ:

Վրացիներն ընկել են հայերիս հետևից, որոնք կառուցելուց, բարգավաճեցնելուց, օգտակար լինելուց բացի ուրիշ տեսակի չեն կարող լինել: Բա չե՞ս տեսնում, որ իսլամը եկել է ու մտել տունդ:

Եթե այդպես շարունակվի (կուզեմայի, որ իմ այս խոսքերը նրանց հասնեն) և Մառնեուլի թուրքերը այսպես աճ տան, մեկ-երկու տասնամյակ հետո Վրաստանի նախագահը կարող է թուրք լինել: Եվ դա չափազանց վտանգավոր է նաև մեզ համար: Ինձ ճիշտ հասկացեք, մենք չենք կարող փոխվել, դեռ Ավարայրի ժամանակ մենք մեր հավատի համար կռիվ ենք տվել: Ցավոք, վրացիները հեշտությամբ են փոխվում:

Փարիզում մի հայտնի հայագետ կա՝ ժան Պիեռ Մահե: Խոսում էինք, գրուցում: Ասացի. «Դուք ո՞ւր եք, չեք երևում... Բոլորը սև ու դեղին են, կամ արաբ են, կամ թուրք, չե՞ք անհանգստանում...» ասաց. «Չէ: Ինչո՞ւ պիտի անհանգստանամ, մի քանի տարի հետո մենք գույնով կլինենք մի քիչ սև»: Ծիծաղեցի: Ասաց. «Ինչո՞ւ ես ծիծաղում»: Ասացի. «Չարդ տանեմ, նրանք չեն գալիս, որ քո կուլտուրան իրենց մեջ ներարկեն, նրանք գալիս են այստեղ, որ իրենց կուլտուրան պարտադրեն քեզ: Ինչպես ժամանակին Կոստանդնուպոլսի Այա Սոֆիան դարձավ մզկիթ, շուտով ձեր Նոտրդամ դը Պադին կդառնա մզկիթ, և խաչի փոխարեն կիսալուսինը կծօղի: Դուք չեք նկատում, - ասացի, - որ սրանք ձեր կուլտուրան չեն ընթրում: Սրանցից ո՞ր մեկն է գնում ձեր թանգարանները, Լուվրը, ո՞վ է ուզում տեսնել ձեր Ռոդենի, Մանեի, Մատիսի ու Սեզանի գործերը: Նրանք իրենցն ունեն, իրենց համայնքն են ստեղծում, իրենց սովորություններով, իրենց վարքուբարքով և թելադրում են տանտիրոջ նման... Հսկա Ռուսաստանին էլ է մույն բանը սպասվում: Ժամանակն է, որպեսզի ռուսները փշոտվեն, չեն փշոտվում...»

- Խորհրդային տարիներին մշակութային շփումների հաղորդակցվելու լավ ավանդույթ կար, գրողների, արվեստագետների հետ միանգամից այս կապի ընդհատումը բոլորիս մոտ մի տեսակ կղզիացում, վակուում է առաջացրել: Չե՞ք կարծում, որ այդ կապերը օր առաջ վերականգնել է պետք:

- Էդ կապերը մույնությամբ հնարավոր չէ վերականգնել: Ես մեկ այլ բան կասեմ, որը քո հարցի հետ կապ չունի: Գիտե՞ս՝ ինչու ենք Հայաստանից դուրս այդքան հանճարեղ հայեր տվել. Վիլյամ Սարդյան, Ռուբեն Մամուլյան, Շառլ Ազնավուր, Աշոտ Մալաթյան, ԱՄՆ-ում մույնիսկ հայկական ժագունով տիեզերագնաց ունենք՝ Ջեյմս Բադյանը, որի հայրը դարաբաղցի է եղել: Ինչո՞ւ, որովհետև հայ մարդը դարեր շարունակ սովորել է ապրել կայսրություններում, սովորել է իր տրամադրության տակ տարածք ունենալ, ասպարեզ ունենալ: Հիմա, ասում ես, հայերը գնում են ու գնում, դա սովոր չի, դա սուտ է: Այո՞, կան բազմաթիվ թերացումներ, կա անարդարություն, բայց հիմնական պատճառը դա չէ: Գնացողներն ասպարեզ չունեն աշխատելու: Հայ մարդու էներգիան ներսից պայթում է, տարածք ու ճանապարհ է ուզում, որպեսզի միտքը գործի, հանճարեղ գործեր անի: Էդպիսի գործեր անելու հնարավորություն չկա Հայաստանում: Դրա համար Սփյուռքում մենք կծնենք հանճարներ, այստեղ՝ դժվար: Խորհրդային շրջանը տարածքների ու ինքնահաստատման ժամանակաշրջան էր: Այդ տարիներին ես բազմաթիվ ազգությունների մեջ եմ եղել: Ինձ ուղղակի պաշտում էին, էդպիսի բարեկամություն կար: Մի՛ մոռացեք, որ բարեկամության քարոզչությունը, ի վերջո, իր դերը խաղում էր: Հիմա միակ բանը մնացել է փող... փող, էլի փող... Սարդյան էլ պետք չէ ընկերությունը, բարեկամությունը: Սա դաժան կորուստ է, Ռոբերտ ջան: Այո՞, մեծ կորուստ է, որ կորվել ենք ռուսական մշակույթից:

Կորցնելով ռուսական կուլտուրան՝ մշակութային դաշտը, մենք կորվում ենք համաշխարհային մշակույթից և կորցնում ենք ամեն ինչ...

Ես խորը մտածելու բան եմ ասում...

Երիտասարդ հայ արվեստագետների գիտական փասնաչորսերորդ նախաշրջանը

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի աջակցությամբ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին և 13-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց երիտասարդ հայ արվեստագետների գիտական հերթական տասնչորսերորդ նախաշրջանը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ *Աննա Ասատրյանը*:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստագետներ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Հայաստանի ազգային արխիվից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից, մաս երկու մասնակից՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից և մեկը՝ Լիբանանից:

Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ընթերցվեց 25 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերը:

ԿԵՐՊՐՎԵՍ: «Սարդկային ճակատագրերը Գրիգոր Խանջյանի լիտոփորագրություններում» բանախոսության մեջ Երևանի պետական համալսարանի դասախոս, արվ. թեկն. *Յոհաննես Վարդանյանը* անդրադարձավ արվեստագետի գրաֆիկական գործերին և վերլուծեց նկարչի լիտոփորագրությունները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող *Շուշանիկ Մուրադյանը* ներկայացրեց «Արա Բեքարյանի հայ արվեստին նվիրված հոդվածները «Սովետական արվեստ» ամսագրում» զեկուցումը: «Դիմա-հայաց պատկերագրության դրսևորումները Վանի թագավորության արվեստում» բանախոսության հեղինակն էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ *Գայանե Պողոսյանը*: Հայաստանի ազգային արխիվի գիտաշխատող, արվ. թեկն. *Նարե Նադարյանը* ներկայացրեց և վերլուծեց քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի «Պարողներ» քանդակաշարը: «Մշակութային կրթության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում» զեկուց-



մամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թեկն. *Մանե Սկրտչյանը*: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվ. թեկն. *Սյուզաննա Գրիգորյանը* ներկայացրեց «Խճանկարը Եղիշե Թադևոսյանի արվեստում» թեման և քննեց նկարչի հաստոցային խճանկարչական աշխատանքները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ *Սարի Աբրահամյանը* հանդես եկավ «Բնանկարը Ստեփան Աղաջանյանի արվեստում» բանախոսությամբ: «Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումները և դրանց դերը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրման գործում» զեկուցման հեղինակն էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թեկն. *Մերի Կիրակոսյանը*:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվ. թեկն. *Յուլիաննա Մանուկյանը* անդրադարձավ ռուս ակնավոր կոմպոզիտոր Սերգեյ Սլոնիմսկու արվեստին և վերլուծեց կոմպոզիտորի տարբեր ժանրերի ստեղծագործությունները: «Հայ երաժշտական իրադարձությունները Փարիզում 19-րդ դարավերջին՝ ըստ «Անահիտ» հանդեսի հրատարակումների» բանախոսությունը ներկայացրեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվ. թեկն. *Աննա Աղաջյանը*: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող *Անի*

Հակոբյանը «Մի նորահայտ հայրուր Շատախ աշխարհից» զեկուցման մեջ բացահայտեց ավանդական, բանաձևային հայրուրի անտիպ տարբերակ: «Մագուրկայի ժանրը Ստեփան Էլմասի դաշնամուրային ստեղծագործության մեջ» վերնագիրն էր կրում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ *Մերի Գրիգորյանի* զեկուցումը: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող *Լիլիթ Հակոբյանը* քննության առավել իրանահայ երաժշտական մշակույթի ակնավոր ներկայացուցիչ, կոմպոզիտոր Նիկոլ Գալանդերյանի անդրամիկ՝ «Լայվարի որսը» օպերան: «Կոնստանտին Պետրոսյանի ստեղծագործական գործունեությունը ՀՀ անկախության շրջանում» բանախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թեկն. *Լիլիթ Արտեմյանը*: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ Սարիանա Պողոսյանը «Կիթառ և լյուտնա» թեմայով զեկուցման մեջ զուգահեռներ անցկացրեց երկու գործիքների կառուցվածքային առանձնահատկությունների միջև: «Գևորգ Արմենյանի նորահայտ լարային կվարտետը» զեկուցումը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ *Արմենուհի Բաբոյանը*: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Ասդար Ջանաբի Վահաբի (Իրան) բանախոսությունը վերաբերում էր Ֆիրդուսու «Շահնամե»-ի մարմնավորումներին Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստում թեմային: «Պողոս Ջելալյան. Յոթ սեկվենցիաներ»

վերտառությամբ բանախոսության հեղինակը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ *Կարապետ Ավետյանը* էր (Լիբանան): Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվ. թեկն. *Նարինե Սահակյանը* անդրադարձավ Ղ. Սարյանի և Վ. Աճեմյանի ստեղծագործական երաժշտամտածողության մեջ առկա որոշակի աղերսներին և վերլուծեց նրանց երկու լարային կվարտետները: «Երվանդ Երկանյանի տերյանակներ» թեման ներկայացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ *Շուշանիկ Յուլիաննիսյանը*:


ԿԻՆՈ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թեկն. *Արսեն Համբարձումովի* զեկուցումը վերնագրված էր «Դատարկ կադր. Նշանակությունը և իմաստը ֆիլմի համատեքստում»:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: «Տայք-Գուգարքի միջնադարյան հայկական ճարտարապետական դարձող կայացումը՝ Օշկվանքի օրինակով» զեկուցմամբ հանդես եկավ ճարտարապետության շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, ճարտ. թեկն. *Դավիթ Նահատակյանը*: Միջնադարյան եկեղեցիների մի քանի օրինակներում կիրառված նախագծման սկզբունքների հետազոտման էր միտված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, ճարտ. թեկն. *Հրանտ Յուլիաննի* բանախոսությունը: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ *Ռուբեն Ոսկանյանի* բանախոսությունը կրում էր «Վշտարակի բերդաթաղի հուշարձաններն ու դրա տարածքի ընդհանուր կազմակերպումը» վերնագիրը: Պերսեպոլիսի կառուցապատման ճարտարապետական առանձնահատկությունների մասին էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ *Գուրոյս Բեշավարյանը* (Իրան) զեկուցումը:

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների առողջ մթնոլորտում:

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ *Աննա Ասատրյանը*:

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
երիտասարդ արվեստագետների
խորհրդի նախագահ



ԱՆՎԱՆԻ ՇՈՒՇԵՑԻՆԵՐԸ

Ալբերտ Խաչատրյանի «Անվանի շուշեցիները» գիրքը (Ստեփանակերտ, 2017 թ.) հռչակավոր քաղաքի փառքը կազմող 504 անվանի շուշեցիների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հանրագիտարանային

բնույթի արժեքավոր հետազոտություն է, որում տեղ են գտել վերջին ավելի քան երկու դարերում իրենց գործունեությամբ հայտնի պետական, ռազմաքաղաքական, գիտական, հոգևոր, մտավոր, մշակութային և այլ ոլորտներում հետք թողած շուշեցիներ: 19-րդ դարի հայոց մտավոր խոշոր կենտրոն Շուշիում են ծնվել Նապոլեոն կայսեր հանրահայտ մամլոյուկ Ռուստամ Խաչատրյանը (Ռուստոմը), ռուսական բանակի զորավարներ Սկրտիչ և Պողոս Մելիք-Շահնագարյանները, Հոկիաննես Լազարյանը, ծովակալ Վլադիմիր Փիրումյանը, մեծանուն գրող Մուրացանը, պատմաբան Լեոն, հայտնի գրականագետ և մանկավարժ Ավետիք Բահաթրյանը, ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Կոստի Համբարձումյանը, Հա-

ՇՈՒՇՎԱ ԱՆԱՆՑ ՓԱՌԻՔԸ

յաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը, հռչակավոր զեղանկարիչ և քանդակագործ Երվանդ Քոչարը...

19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայոց մտավոր մայրաքաղաք Շուշին իր գործիչներով ազդեցիկ ներկայություն էր ոչ միայն հայկական, այլև ռուսական ու եվրոպական իրականության մեջ: Ա. Խաչատրյանն այս գրքով ոչ միայն ներկայացնում է հայտնի շուշեցիների կյանքն ու գործունեությունը, այլև արժեքավոր և հարուստ նյութ տրամադրում Շուշի քաղաքի մասին, բնականաբար՝ մաս հայոց պատմության այս շրջանը հետազոտողներին:

Այժմ լուսահոգի Ա. Խաչատրյանը և իր հարազատ քաղաքի նշանավոր գործիչներից մեկն էր, հայտնի մանկավարժ Արսեն Խաչատրյանի որդին, որը մեծ ազդեցություն է ունեցել իր

որդու գաղափարական ձևավորման վրա. «Շուշիի հանդեպ հորս ունեցած սերը, պատկառանքն ու համակրանքն է, որ փոխանցվել են ինձ, մտել հոգուս մեջ, որի համար էլ 1938-ից, ինչպես ժայռաքեկորին կառչած ծառ, ցայսօր ապրում եմ Շուշիում, որն իմ բնօրրանն է»:

Երբ այս արժեքավոր գիրքը պատրաստ էր հրատարակության, հեղինակը գնաց միամալու Շուշվա անանց փառքը կազմողների լուսապսակ փառանգին, իսկ գրքի հրատարակությունն իրականություն դարձրին նրա որդին՝ հայրենի Շուշիում և ողջ Արցախում հայտնի վիրաբույժ Վիգեն Խաչատրյանը, և հեղինակի սիրասուն տիկինը՝ ԼԴՂ վաստակավոր մանկավարժ Լարիսա Ղազարյանը, ինչի համար իմ խորին շնորհակալությունն են հայտնում նրանց:

Հայկազուն ԱԼԿՐՅԱՆ

ՄԵԾ ԸՈՒՄԱՆԻՍՏՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆ


Է. Ս. Մարգարյանի ծննդյան 90-ամյակի առթիվ

Անվանի գիտնական-մշակութաբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մարգարյանը ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 24-ին Երևանում, մտավորականի ընտանիքում:

1953 թ., ավարտելով Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, հրաժարվում է դիվանագիտական կարիերայից և նույն թվականին ընդունվում Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ արտասահմանյան փիլիսոփայության պատմություն մասնագիտությամբ: Այն ավարտելով, 1958 թ. ՄՊՀ փիլիսոփայության ֆակուլտետում փայլուն կերպով պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ «Հասարակական շրջապտույտի հայեցակարգի պատմական ակնարկ ու քննական վերլուծություն» թեմայով:

60-ական թվականների սկզբից, հետաքրքրվելով այդ տարիներին Արևմուտքում ինտենսիվորեն զարգացող համակարգերի ընդհանուր տեսությամբ, Մարգարյանը առաջիններից մեկը նախկին Խորհրդային Միությունում իր առջև դրեց աննախադեպ խնդիր՝ կապակցել համակարգային մոտեցումը էվոլյուցիոն սոցիոմշակութային պրոցեսների հետազոտման հետ, նրա հիմնարար սկզբունքները գործադրելով մարդկանց հասարակական կյանքի, մարդկային գործունեության ու մշակույթի ֆեոնմենի ուսումնասիրման նկատմամբ: Արդյունքում, ինչպես նշվում է ռուսական գրականության մեջ, մշակույթի և հասարակության համակարգային հետազոտության սկզբունքների մշակումը ամբողջապես դարձավ նրա անձնական գիտական վաստակը: Այդ ժամանակ էլ նա ձեռնարկեց դոկտորական ատենախոսության նախապատրաստումը՝ «Հասարակական կյանքի համակարգային հետազոտության մեթոդաբանական հիմնախնդիրները» թեմայով, որը պաշտպանեց 1967 թ. ԽՍՀՄ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտում: Այն ԽՍՀՄ ԲՈՂ-ը որակեց որպես հասարակագիտության բնագավառում այդ ժամանակների լավագույն հետազոտական աշխատանքներից մեկը:

Պրոֆեսոր Է. Մարգարյանը սկսած 1958 թվականից ավելի քան կես դար աշխատել է ՀՀ ԳԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ լինելով նրա նվիրյալներից ու գիտության քրմերից մեկը: Այստեղ էլ նա կազմակերպել ու երկար տարիներ (1973-1992) ղեկավարել է Խորհրդային Միության միակ մշակույթի տեսության բաժինը:



Երկարատև ու գիտական նվաճումներով հագեցած կյանքում նա գրել է ավելի քան երկու հարյուր գիտական աշխատություն, այդ թվում երեսուն մենագրություն, հրատարակված ոչ միայն Հայաստանում և Ռուսաստանում, այլև աշխարհի բազմաթիվ այլ երկրներում:

Է. Մարգարյանի երկարամյա գիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ անցյալ դարի 50-ական թթ. կեսերից մինչև 80-ական թթ. կեսերը և 80-ական թթ. կեսերից մինչև իր կյանքի վերջը: Առաջին շրջանն առանձնանում է լուրջ ձեռքբերումներով մշակույթի տեսության հիմնախնդիրների հետազոտության բնագավառում: Անցյալ դարի 60-80-ական թթ. Մարգարյանի մշակած մշակութաբանական ու ավանդույթաբանական տեսության ձեռքբերումները նկատի ունենալով 90-ականներին ռուսաստանցի մասնագետները այն անվանեցին Հայկական մշակութաբանական դարոց:

Է. Մարգարյանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն ունեն նաև որոշակիորեն արտահայտված ազգային տեսանկյուններ: Մասնավորապես,

իրեն մեծ հումանիստ և գիտնական, Է. Մարգարյանը չէր կարող անտարբեր լինել Հայոց ցեղասպանության հարցի հետազոտման նկատմամբ: Է. Մարգարյանը առաջիններից մեկն է ձեռնարկել Հայոց ցեղասպանության հիմնախնդրի մշակութաբանական, քաղաքակրթական քննությունը: Նրան հետաքրքրում էր հատկապես ցեղասպանության համաշխարհային ասպեկտների մշակութաբանական վերլուծությունը: Կատարելով ցեղասպանության վերաբերյալ իրավաբանագիտական, հոգեբանաբարոյագիտական, մշակութաբանաքաղաքակրթական ինքնատիպ ուսումնասիրություն՝ նա առաջադրեց ցեղասպանության վերաբերյալ հետաքրքրական մշակութաբանական-փիլիսոփայական հայեցակարգ, որը, նրա կարծիքով, կարող է հիմք ծառայել ցեղասպանության մասին գիտական համակարգի՝ ցեղասպանագիտության ստեղծման համար:

Է. Մարգարյանի գիտական գործունեության երկրորդ շրջանին բնորոշ է հումանիստական ուղղվածությունը՝ խարխսված առաջին շրջանի զուտ տեսական հետազոտությունների արդյունքների վրա, որի շնորհիվ 1992 թ. ԳԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Գոյատևման ու զարգացման հիմնարար ռազմավարական հետազոտությունների բաժինը, իսկ 1994-ին՝ Գոյատևման ու զարգացման ռազմավարությունների մշակմանն աջակցող միջազգային ասոցիացիան՝ ԳՁՈՄԱՄ (Երևան), որի նախագահն էր մինչև կյանքի վերջը: Այս ուղղությամբ Է. Մարգարյանի գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Гуманизм 21-го столетия. Идеология самосохранения человечества». Ер., 2008, Изд-во РАУ մենագրության մեջ, որի ներածականում ասվում է, որ այն «կարելի է համարել գոյատևման-զարգացման ռազմավարական հիմնախնդիրների ոլորտի ձեռնարկ»:

2014 թ. ծննդյան 85-ամյա հոբելյանի օրերին Մոսկվա-Մանկու-Պետերբուրգի հումանիտար նախաձեռնությունների կենտրոնը «Մշակութաբանություն. 20-րդ դար» մատենաշարով լույս է ընծայել Է. Ս. Մարգարյանի երկերի «Ընտրանին»: Մասնագետների կարծիքով, 20-րդ դարում գերմանացի Վ. Օստվալդից (1853-1932) ու ամերիկացի Լ. Ուայտից (1900-1975) հետո մշակութաբանության «երրորդ ծնունդն» ու զարգացումը իրավամբ կապվում է նրա անվան հետ:

Է. Մարգարյանի բարոյական նկարագրի, հայացքների, մարդասիրական գործունեության համառոտ քննությունը հիմք են տալիս նրան դասելու մերօրյա անվանի հումանիստներ Ալբերտ Շվեյցերի (1875-1965) և Դմիտրի Լիխաչովի (1906-1999) հետևորդների շարքին:

Է. Մարգարյանը մահկանացուն կնքել է 2011 թ. մարտի 12-ին, Մոսկվայում, աճյունն ամփոփված է Երևանի քաղաքային պանթեոնում:

Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱ ակադեմիկոս, սոց. գիտ. դոկտ.,
պրոֆեսոր
Սարգիս ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ
«ԱԶԳ»

ՀՀ ԳԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ամփոփեցին «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն) կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի մեկ տարին

2018 թվականից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնը (ԳԿՄԿ) իրականացնում է «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն) կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիրը՝ միտված շրջակա միջավայրի պաշտպանության (բնապահպանության) ոլորտում Հայաստանում և Վրաստանում կրթական ծրագրերի որակի բարելավմանը, առարկայական ծրագրերի բազմակողմանի արդիականացման ապահովմանը՝ հիմք ընդունելով Բոլոնիայի և ԵՅԱ-ի (Եվրոպական համալսարանների ասոցիացիա) Ձևաբանության սկզբունքները, ինչպես նաև եվրոպական լավագույն փորձը՝ ներառյալ կրթական տեխնոլոգիաների վերջին նորարարությունները: Ծրագրի եվրոպական գործընկերներն են Տուրայի համալսարանը՝ ծրագրի համակարգողը (Իտալիա), Լիսաբոնի տեխնիկական համալսարանը (Պորտուգալիա), Մարտին Լյուբերի Հալլե Վիթենբերգ համալսարանը (Գերմանիա), Հետազոտությունների ազգային խորհուրդը (Իտալիա) և «Giraf Pm Services GmbH» ընկերությունը (Գերմանիա): Ծրագրի հայկական գործընկերներն են ՀՀ ԳԱ Էվոլյուցիոնոսֆերային հետազոտությունների կենտրոնը և Գավառի պետական համալսարանը, իսկ վրացական գործընկեր հաստատություններն են Իլյայի պետական համալսարանը, Վրաստանի համալսարանը և Վրաստանի գիտակրթական ցանցային ասոցիացիան:

Ծրագիրը կարևորում է հետբուհական կրթության և գիտահետազոտական գործունեության սերտ կապը՝ այդպիսով շրջանավարտներին զինելով նորագույն գիտելիքներով և գործնական հմտություններով: Համալսարան-հասարակություն-արդյունաբերություն կապերը նույնպես կմեծացնեն շրջանավարտների աշխատանքի ընդունման հնարավորությունները:

Բնապահպանական կրթությունը արդիականացնելու նպատակով ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում, որը տեղակայված է ՀՀ ԳԱ Էվոլյուցիոնոսֆերային հետազոտությունների կենտրոնում, ստեղծվում է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա, որտեղ իրականացվելու են ուսանողական, արտաքին շահառուների հետ համագործակցային տարբեր նախագծեր: Բնապահպանության ոլորտում միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական լաբորատորիայի ստեղծումը ծրագրի հիմնական շոշափելի արդյունքներից է, որը էականորեն բարելավելու է հետբուհական կրթության որակի չափանիշները: Ավելին՝ լաբորատորիան հասանելի կդարձնի ժամանակակից լաբորատորիայի ենթակառուցվածքները և հնարավորություն կտա համալսարանների և արտաքին շահառուների միջև իրականացնել տարբեր նախագծեր:

Ծրագրի իրականացման առաջին տարում ձեռք է բերվել ճապոնական «JEOL» ընկերության արտադրության վերջին սերնդի սկանավորող էլեկտրոնային մանրա-



դիտակ, որը հնարավորություն է ընձեռում որոշել մոնո-չի մակերևույթի վրա փոշու չափերը՝ մասնիկային կազմը, փոշու հատիկի քիմիական կազմը (հիմնականում ծանր մետաղների մասով), բացի այդ՝ թույլ է տալիս ուսումնասիրել բույսի և տերևների բջիջները: Ծրագրի գործառնական նպատակներից է հավատարմագրման համար նոր և արդիականացված առարկայական ծրագրերի մշակումը: Բոլոր գործընկեր համալսարաններում արդիականացվելու և մշակվելու են մի շարք առարկայական ծրագրեր, ինչպիսիք են՝ «Շրջակա միջավայրի երկրաքիմիա», «Լանդշաֆտի պլանավորում», «Շրջակա միջավայրի վիճակագրություն», «Հողի որակի մոնիթորինգ» և այլն:

ՀՀ ԳԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում իրականացվել է դասավանդող և դասավանդվելիք դասընթացների համեմատական վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է՝ դասընթացների բովանդակությունը համեմատելով միջազգային չափանիշներով առաջնորդող եվրոպական գործընկեր համալսարանների և եվրոպական այլ առաջադեմ >6

Գենային մուտացիաներ և էվոլյուցիա, թե՛ փոխապդեցություն և էվոլյուցիա

Այսօր, 21-րդ դարում, գիտության լույսի ներքո անժխտելի փաստ է անկենդանի կենդանու ծագումը, կենդանու ծավալումը միաբջջիցներից բազմաբջջիցներ, երկշերտերից եռաշերտեր, ցածրակարգերից բարձրակարգ օրգանիզմներ ուղղությամբ: Այս պրոցեսը նախ և առաջ պայմանավորված է նոր գեների առաջացումով, եղած գեներում փոփոխություններ մտցվելով:

Գիտությանը հայտնի է, թե ինչպես է օրգանիզմներում գենը վերարտադրվում (ռեպրոդուկցիա), իսկ թե ինչպես է նոր գեն, ոչ թե հինից, այլ գրոյից բուրրովին նոր առաջանում, հայտնի չէ, նաև հայտնի չէ, թե ինչպես է ձևավորվել առաջին գենը:

Ըստ գիտության օրգանիզմներում արդեն առկա գեները այլ գեների վերածվելու միակ մեխանիզմը պատահական, քառասային, անկազմակերպ գենային մուտացիաներն են, որոնց մի մասը օգտակար են և կազմում են տարրական էվոլյուցիոն նյութ նոր տեսակի և կարգաբանական մյուս խմբերի առանձնակների առաջացման համար:

Գիտական հայտնագործությունների 21-դարյա բազմակողմանի ամբողջությունը տրամաբանորեն վերլուծելիս հնարավոր է դառնում ոչ միայն ամբողջովին և հիմնավորապես ժխտել էվոլյուցիոն պրոցեսում գենային մուտացիաների կառուցողական դերակատարությունը այլ հաստատել նաև մուտացիաների խոչընդոտող դերը էվոլյուցիոն պրոցեսին, էվոլյուցիոն պրոցեսը հիմնավոր մեկնաբանել այլ մեխանիզմով:

Նախ հիմնավոր ժխտելով մուտացիաների դրական դերակատարությունն էվոլյուցիայում:

Գիտական - ուսումնական գրականության մեջ տեղ գտած կարևոր, բայց այս թեմայի հետ ուղղակիորեն չառնչվող մանրամասները մի կողմ թողած, ճշտեմք, թե սկզբունքորեն ինչով է տարբերվում կենդանու անկենդանից: Անկենդանու մյուսաբանությունը տեղաշարժերը, փոփոխությունները տեղի են ունենում ոչ սահմանափակ, ամորոշ ծավալում և քառասայնորեն: Կենդանի օրգանիզմը բջջաթաղանթի, բջջապատի, արտաքին ծածկույթների օգնությամբ հստակ սահմանազատված է արտաքին անհարկի ազդեցություններից: Կենդանու ներքին միջավայրում մյուսաբանողական տեղաշարժերը, փոփոխությունները հստակ կանոնակարգված են կենդանու կողմից, արտաքին միջավայրի հետ մյուսաբանողական փոխանակությունը ևս կարգավորվում-թելադրվում է կենդանու կողմից: Նորմայում արտաքին աշխարհից օրգանիզմի ներքին միջավայր մյուսաբանողական (մաստերիական) որևէ մարմին կամ մասնիկ ներթափանցելուց առաջ ստուգվում է օրգանիզմի արտաքին ծածկույթների կողմից, վնասակար ժխտվում, հետ է մղվում, օգտակարը օրգանիզմի ներքին միջավայր



է բաց թողնվում օրգանիզմի ներքին միջավայրին համապատասխան թուլատրելի տեսքի բերվելուց հետո միայն, որպեսզի օրգանիզմի ներքին միջավայր քառասայնորեն ոչինչ չնեթափանցի ու քառասային որևէ պրոցեսի պատճառ չդառնա:

Անկենդան համակարգերում էներգիայի ցանկացած տեսակ տվյալ տեղում ունի իր քառասային-անկենդանի բնորոշ անկազմակերպ դերակատարությունը: Կենդանիում նորմալ կենսաբանական պրոցեսներ իրականացնելու համար կիրառելի էներգիայի միակ տեսակը նուկլեոտիդների եռֆոսֆատների՝ հատկապես ԱՏՖ-ի թթվածին ֆոսֆոր մակրոէրգիլ քիմիական կապերի էներգիան է: Մակրոէրգիլ կապերով մոլեկուլներ սինթեզվում են կենդանի բջջում, կենդանու կողմից, կենդանու թուլատրությամբ օրգանիզմի ներքին միջավայրում մյուսաբանողական փոխանակության հետևանքով առաջացած վնասակար մյուսաբանողական գոյացությունները հիմնականում վնասակար հատկանիշներով են լինում: Այդ նոր հիպոթեզի օգտակար հատկանիշի օգտակարությունը պետք է դիտարկել ոչ թե առանձին, մոռանալով կորցրած 100% օգտակարի մասին, այլ դիտարկել կորցրածի և ձեռքբերածի գումարային ելքը, որն ամբամ ամենապատիվալ մոտեցման դեպքում մի կերպ կարող է տալ գրոյական արդյունք, այսինքն դրական արդյունքը բացառված է, բացասական հետևանքը՝ ռեալ: Մեկ գենը կամ օրգանիզմի բոլոր գեները միասին վերցրած կյանքի ընթացքում ենթարկվում են ոչ թե մեկ այլ միջավայր մուտացիաների, հաշվի առնելով մուտացիաների վնասակարության բարձր տոկոսը, մուլտիպլ միայն միջմուտացիոն հաշվարկով օրգանիզմը տուժվում է մուտացիաներից, որի ցայտուն դրսևորումներից են տևական ապրող օրգանիզմում կուտակվող ու ծերացման բերող սոմատիկ մուտացիաները:

Լինելով վնասակար, մուտացիաները ոչ միայն չեն կարող ապահովել էվոլյուցիոն առաջընթաց, այլ նաև խոչընդոտ են էվոլյուցիայի համար, դանդաղեցնում են էվոլյուցիոն պրոցեսը: Այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ օրգանիզմում առկա գեներում օգտակար փոփոխություններ տեղի են ունենում՝ հին

Նորմայում մուտացիաները, որպես վնասվածքի տեսակ օրգանիզմի պաշտպանական մեխանիզմներով ճանաչվում և վերականգնվում են /ռեպարացվում են/: Չռեպարացված մուտացիաները առաջացնում են տարբեր հիվանդություններ, կիսամահացու են կամ մահացու (լետալ), ասել է թե թուլացնում են օրգանիզմը կամ կործանարար են: Ինչու և ինչպես:

Նախ գենը, որը մուտացվեց նպատակային կառույց էր և օրգանիզմին ապահովում էր ռեալ օգտակար հատկանիշ: Մուտացված գենով օրգանիզմը կորցնում է օգտակար հատկանիշ, ձեռք է բերում՝ ըստ գիտական կենսաբանության հիմնականում վնասակար, բայց հնարավոր է երբեմն նաև օգտակար հատկանիշ: Այդ նոր հիպոթեզի օգտակար հատկանիշի օգտակարությունը պետք է դիտարկել ոչ թե առանձին, մոռանալով կորցրած 100% օգտակարի մասին, այլ դիտարկել կորցրածի և ձեռքբերածի գումարային ելքը, որն ամբամ ամենապատիվալ մոտեցման դեպքում մի կերպ կարող է տալ գրոյական արդյունք, այսինքն դրական արդյունքը բացառված է, բացասական հետևանքը՝ ռեալ: Մեկ գենը կամ օրգանիզմի բոլոր գեները միասին վերցրած կյանքի ընթացքում ենթարկվում են ոչ թե մեկ այլ միջավայր մուտացիաների, հաշվի առնելով մուտացիաների վնասակարության բարձր տոկոսը, մուլտիպլ միայն միջմուտացիոն հաշվարկով օրգանիզմը տուժվում է մուտացիաներից, որի ցայտուն դրսևորումներից են տևական ապրող օրգանիզմում կուտակվող ու ծերացման բերող սոմատիկ մուտացիաները:

Լինելով վնասակար, մուտացիաները ոչ միայն չեն կարող ապահովել էվոլյուցիոն առաջընթաց, այլ նաև խոչընդոտ են էվոլյուցիայի համար, դանդաղեցնում են էվոլյուցիոն պրոցեսը:

Այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ օրգանիզմում առկա գեներում օգտակար փոփոխություններ տեղի են ունենում՝ հին

օգտակար գենից առաջանում է նոր օգտակար գեն, դառնալով տարրական էվոլյուցիոն նյութ:

Փորձը ցույց է տալիս նաև, որ էվոլյուցիայի ընթացքում ավելացել է գեների տեսակային քանակությունը՝ ապահովելով օրգանիզմներին բուրրովին նոր հատկանիշներ:

Ինչպե՞ս և ինչո՞ւ են կենդանու մեջ առաջանում բուրրովին նոր և մասնակիորեն նոր հատկանիշներ, ասել է թե նոր և փոփոխված գեներ, որոնք կուտակվելով կենդանու մեջ, տանում են էվոլյուցիոն առաջընթացի:

Օրգանիզմն ապրում է միջավայրում: Շրջակա միջավայրը շարունակ փոփոխական քառասային ազդեցություն է ունենում կենդանու վրա: Կենդանին հակազդելով արտաքին ազդեցություններին, դրանցից որոշների նկատմամբ ունի նախկինում մշակված հակազդեցային մեխանիզմներ արագոված գեներում: Այդ գեները օրգանիզմի նախկինում կրած տևական, բազմակի միօրինակ ազդեցություններին օրինաչափ հակազդեցության արդյունք են:

Նմանատիպ ազդակներից՝ ազդակներ, որոնց հրահրմամբ օրգանիզմի ներքին միջավայրում ձևավորվել է ազդակին բնորոշ գեն, այդ գենում առաջանում է մի քիչ փոփոխված ազդակին բնորոշ կետային փոփոխություն, գենը օրգանիզմի կողմից հարմարեցվում է նոր իրավիճակին և ձևավորվում է նոր՝ ալելային գեն:

Նոր բնույթի ազդակներին տևական հակազդելիս կենդանու մեջ ձևավորում են լրիվ նոր գեներ:

Պետք է հստակեցնել հետևյալը. որպեսզի օրգանիզմի գենոտիպում արտաքին ազդեցությունը ունենա ոչ թե վնասակար՝ մուտացիոն ազդեցություն, ուղղակի, անհարկի ներթափանցելով օրգանիզմի ներքին միջավայր ու խճճելով օրգանիզմի պիտանի որոշ կառույցներ, այլ ունենա օգտակար՝ կառուցողական ազդեցություն, սկսած օրգանիզմի միջավայր սահմանից ազդող գործոնի կառուցվածքը և էներգիան կենդանու կողմից պետք է տրամաֆորմացվի, հարմարեցվի կենդանու ներքին միջավայրին ու միայն այդ վիճակում բաց թողնվի կենդանիի ներքին միջավայր, դրա նկատմամբ կենդանու ներքին միջավայրում տեղի են ունենում մի շարք քիմիական ռեակցիաներ, որոնց վերջնական արդյունքը օրինաչափ, նպատակային փոփոխություններ է գենում կամ նոր գենի ձևավորումը: Այս մեխանիզմով ձևավորված գենը, որը նախկինում օգտակար էր, այժմ կերտվում, դառնում է ավելի օգտակար և բնականաբար գոյության կռվում պայքարող օրգանիզմին ապահովում է առավելություն՝ էվոլյուցիոն առաջընթաց:

Գորգեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԲԺԻՂ-Քերական
Շիրակի մարզ, գյուղ Սառնաղբյուր

ԸՇ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում...

➤5 համալսարանների հետ:

Ընդհանուր առմամբ, 33 ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնում դասավանդվող և դասավանդվելիք 11 դասընթացների առարկայական նկարագրերը 13 չափանիշների շրջանակներում համեմատվել են 12 առաջավոր գիտակրթական հաստատությունների կազմած առարկայական նկարագրերի հետ: Յուրաքանչյուր համեմատական վերլուծության վերջում դասախոսները ներկայացրել են հիմնական մանրությունները և տարբերությունները, ինչպես նաև բարեփոխման առաջարկներ:

Օրագրի շրջանակներում նաև իրականացվել է 33-ում բնապահպանական կրթության ՍԿՈԹ վերլուծությունը՝ մի քանի չափորոշիչների համաձայն, որը ներկայացնում էր բնապահպանական կրթության ներկա իրավիճակը 33-ում, շահեկիցներին, առկա ռեսուրսները և օրենսդրական կարգավորումները, պոտենցիալ գործատուների շրջանակում

կատարված հարցումների արդյունքները:

Օրագրի շրջանակներում 2020 թ. 33 ԳԱԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում կազմակերպվելու է ամառային դպրոց՝ «Բնապահպանական կրթությունը համուն կայուն առողջության» խորագրով: Ամառային դպրոցը ուսանողներին հնարավորություն կտա ձեռք բերել դաշտային և լաբորատոր աշխատանքների կատարման փորձառություն: Ուսանողները ձեռք կբերեն նաև հողի մշտադիտարկման, հողի քարտեզագրման և հեռազննման գործնական հմտություններ, ինչպես նաև վերլուծական հմտություններ՝ ուղղված շրջակա միջավայրում և մարդու սննդակարգում օրգանական, անօրգանական և ռադիոակտիվ աղտոտիչների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին:

Արուսյակ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
33 ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ

Թուրքական կուսակցությունը Մեծամորի արտմական վերաբերյալ առաջարկ է ներկայացրել մեջլիս

Թուրքիայի ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության (ԺԿԿ-CHP) անդամ, մեջլիսի պատգամավոր Դենիզ Յավուզը մազը հայտարարել է, որ կուսակցության անունից 40 պատգամավորի ստորագրությամբ առաջարկ է ներկայացվել խորհրդարան՝ Հայաստանում Մեծամորի ատոմակայանի «վտանգները ուսումնասիրելու համար»: Յավուզը մազը մեջլիսում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ մեջլիս է, որ Մեծամորի ատոմակայանը Իգդիրից ընդամենը 16 կմ հեռավորության վրա է գտնվում, և ատոմակայանի անվտանգությունը Թուրքիայի և տարածաշրջանի երկրների համար կենսական նշանակություն է կրում: «Պարզելու համար, թե Մեծամորի խնդիրը մեր երկրի և հարևան երկրների վրա ինչ կործանիչ հետևանքներ կարող է ունենալ, ինչպես նաև խնդրին միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելու համար, մենք ԺԿԿ-ի անունից, 40 պատգամավորի ստորագրությամբ խորհրդարանական հետազոտության առաջարկ ենք ներկայացրել», - ասել է Յավուզը մազը:



(Հարցազրույց МГИМО-ի (Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ) միջազգային ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, ռուսական տնտեսագիտական ընկերության նախագահ Վալենտին ԿԱՏԱՍՆՈՎԻ հետ):

Պրովոկատոր բանկիրները
- Պարոն Կատաստով, 94-ի ամռանը համաշխարհային ֆինանսական համակարգի համար նշվեց կարևոր տարեկից. 70 տարի առաջ՝ 1944 թվականին, ամերիկյան Բրետտոն-Վուդս քաղաքում գումարված կոնֆերանսում դուրսը հռչակվեց

լու այդ նպատակին: Իմ համոզմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմի նպատակներից մեկը նույնպես եղել է վերջնականապես ամրապնդելու դոլարի տիրապետությունը: Բրետտոն-Վուդսյան կոնֆերանսը կայացավ 1944 թվականի հուլիսին: Ի դեպ, այդ կոնֆերանսում ընդունված ոսկեդոլարային

առանց դուրսի իսկ ապահովագրման, և ֆինանսական աշխարհը դրանց դատապարտում է: Եվ ստացվել է այնպես, որ գրոյական ապահովագրմամբ փող տպելը դատապարտվում է, իսկ 5 տոկոսի ապահովագրմամբ արդեն լավ է: **Օդից փող շինել: ԱՄՆ-ին դա հաջողվեց**

Սակայն վերադառնալով ամերիկյան ոսկուն: Բռնագանձումից հավաքված ոսկու պաշարը աճեց Երկրորդ համաշխարհայինի տարիներին: Այդ տարիներին Միացյալ Նահանգները մեծ եռան-

ցերը ամրապնդեց արդեն գործող նախագիծը, որն Ամերիկյան նախապատրաստում էր ամբողջ 5 տարի: Իսկ այդ 5 տարին առնչեցին էր կարևոր իրադարձություններով: 1973 թվականին սկսվեց արաբա-իսրայելական պատերազմը, որը հանգեցրեց էներգետիկ ճգնաժամի և նավթի գնի քառակի թանկացման: Նավթի գնի աճը կտրուկ բարձրացրեց պահանջարկը արժույթի (վալյուտայի) նկատմամբ: Եվ ահա ամերիկյան պետքարտուղար Չեմերի Քիսսինջերը (որն, ի դեպ, այդ պատերազմի հրահրողները մեկն էր) հատուկ առաքելությամբ մեկ-

«ԿԱՆԱԳԻ» ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչու՞ն ԿԱՆԱԳԱ ԴՈՒՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ և ԿԳՄ՝ ԱՐՊՅՈՐ ԴՐԱ ՎԵՐՁՈՒ

համաշխարհային գլխավոր պահուստային արժույթ: Ինչո՞ւ հենց դուրսը, այդ պահին դուրսը ունե՞ր ախտանշաններ:

- Սկսենք նախապատմությունից: Մինչև 20-րդ դարի սկիզբը համաշխարհային գլխավոր պահուստային արժույթը բրիտանական ֆունտ սթեռլինգն էր: Այդ տիրապետությունը պաշտոնական չէր, այլ պայմանավորված էր այն վստահությամբ, որ կար Լոնդոնի նման համաշխարհային գաղութային կայսրության կենտրոնի նկատմամբ: Բրիտանական ազգերի համադաշնությունը ընդգրկում էր երկրի բնակչության կեսից ավելին, և այդ կայսրությունում արևը երբեք մայր չէր մտնում:

1821 թվականին Լոնդոնում առաջին անգամ մտցվեց ոսկե ստանդարտ, այսինքն պետությունը իր փողերը կապեց ոսկու հետ և պարտավորվեց ուզած պահին դրանք փոխանակել ոսկով: Բարձր տոկոսադրույքների շնորհիվ Լոնդոնը դեպի իրեն էր ձգում աշխարհի երկրների կապիտալը և աստիճանաբար դարձավ համաշխարհային ֆինանսական կենտրոն:

Բայց շուտով Անգլիայում արդյունաբերությունը սկսեց տկարել, մինչդեռ ԱՄՆ-ում այն սկսեց թափ առնել, և 20-րդ դարի սկզբին տնտեսական ցուցանիշներով ԱՄՆ-ը առաջ անցավ Բրիտանիայից: Սակայն ամերիկյան դուրսը աշխարհում դեռևս երկրորդ և նույնիսկ երրորդ դիրքերում չէր և զիջում էր անգամ գերմանական մարկին և ֆրանսիական ֆրանկին:

Մենք վերջերս նշեցինք ևս մի խոշոր իրադարձություն՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբի 100-ամյակը: Եվ միանշանակ ասենք, որ պատերազմի սանձազերծման գործում մեծ դերակատարում ունեցան ամերիկյան բանկիրները: Ի դեպ, ամերիկյան բանկիրներ կապակցությունը պատմական հասկացություն է: ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգում, որն ստեղծվեց 1913 թ. դեկտեմբերին, մեծ թիվ են կազմում օտարերկրացիները: Եվ, ընդհանրապես, իմ կարծիքով, բանկիրները ազգություն չունեն: Այդ տղերքը աշխարհաքաղաքացիներ են, և հենց դրանք ստեղծեցին Դաշնային պահուստային համակարգը, որպեսզի պատերազմում փող վաստակեն և համաշխարհային ֆինանսական համակարգում հավասարակշռությունը թեքեն ամերիկյան դոլարի կողմը:

- Սակայն դա կատարվեց ավելի ուշ՝ երեսուն տարի հետո...

- Այո, Առաջին համաշխարհային պատերազմը բավարար չեղավ՝ հասնե-



ստանդարտը նախապատրաստված էր դրանից շատ առաջ: 1933 թվականին ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը հայտարարեց... ոսկու բռնագանձման մասին: ԱՄՆ-ի բոլոր քաղաքացիները պարտավոր էին հանձնել իրենց ոսկին: Սույն օրերը չկատարելու համար նախատեսվում էին խիստ պատիժներ: Ամերիկյան դեմոկրատիայի հրաշալի օրինակ: Սակայն խոսքն այդ մասին չէ: Այսօր դժվար է ասել, ամերիկացիների ո՞ր մասը հանձնեց իր ունեցած ոսկին, սակայն, կարծում եմ, հանձնեցին շատերը: Այդ հավաքած ոսկու համար կառուցվեց Կենտրոնական հանգույն Ֆորտ-Լոքս մշակվող պահեստարանը:

Ֆիզիկական անձանցից ոսկու բռնագանձումից հետո բանկերի ոսկին նույնպես տեղափոխվեց այստեղ՝ դրա փոխարեն ստանալով ոսկե ստացականներ: Ահա այսպես գրչի մեկ հարվածով ոսկու պաշարը ԱՄՆ-ում կրկնապատկվեց երկու անգամ: Քանի որ հաշվում էին և՛ Ֆորտ-Լոքսում առկա ոսկու իրական քանակը, և՛ այն թուղթ-ստացականները, որոնք ապահովագրվում էին առկա ոսկու քանակությամբ: Սրանց ընդհանուր չափով համապատասխան բանկերն սկսեցին քողարկել դոլարները:

Գազար Արևելքի համար
- Ուզում եք ասել՝ տավող դուրսը ապահովագրված էր թղթե ստացականներով:

- Չէ, ի՞նչ էք ասում, այդ համակարգը գոյություն ունի դարեր շարունակ, ապահովագրված արժեթղթեր թողարկելը ֆինանսների աշխարհում սրբազան գործ է:

Անշուշտ, կան անպատկառներ, որոնք փողը տպում են բացարձակապես

դով զենք էր վաճառում, ազահությամբ ոսկի էր ներկրում Ամերիկա: Եվ հենց այդ հանգամանքը՝ կուտակված ոսկու ահռելի պաշարները պատճառ դարձան, որ Բրետտոն-Վուդսյան կոնֆերանսում բոլոր երկրները քվեարկեցին դուրսը համաշխարհային պահուստային արժույթ ճանաչելու օգտին: Միացյալ Նահանգներն էլ ստանձնեցին սեփական դուրսը ազատ և անկաշկանդ ոսկով փոխանակելու պարտավորությունը: Սակայն միայն ու միայն պաշտոնական մարմիններին, այսինքն՝ պետությունների կենտրոնական բանկերին: Ի դեպ, այդ պարտավորությունը ընդամենը բանավոր խոստում էր: Այդ կապակցությամբ ոչ մի փաստաթուղթ չստորագրվեց: Միացյալ Նահանգները հարկադրված եղան այդ խոստումը առաջին և վերջին անգամ կատարել 1960-ական թվականների կեսերին, երբ Ֆրանսիայի պրեզիդենտ Շառլ դը Գոլը ԱՄՆ-ից պահանջեց դոլարի իր պաշարը փոխանակել ոսկով:

Իհարկե, այս հանգամանքը ծանր հարված էր Միացյալ Նահանգների համար, քանի որ տպագրական մեքենան աշխատում էր ողջ ծանրաբեռնվածությամբ, և 1961 թվականին եղած ոսկու պաշարն ու թողարկված դոլարների քանակը արդեն հավասարվել էին: Շտապ անհրաժեշտ էր որևէ ելք գտնել: Միացյալ Նահանգները այն գտավ: 1971 թվականի օգոստոսի 15-ին պրեզիդենտ Ռիչարդ Նիքսոնը հայտարարեց այն մասին, որ ԱՄՆ-ը կասեցնում է դոլարը ոսկով փոխանակելու պարտավորությունը: Իսկ 1976 թվականին Յամայկայի կոնֆերանսում ընդունվեց թղթադոլարային ստանդարտը, որը գոյություն ունի մինչև այսօր: Հասկանալի է, որ սրանով իսկ Միացյալ Նահանգ-

ցեց Մերձավոր և Միջին Արևելք՝ ՕՊԵԿ-ի երկրներին համոզելու՝ նավթը վաճառել միայն ու միայն դոլարով: Առաջինը Սաուդյան Արաբիան էր: Անշուշտ, նավթ վաճառող երկրներին փոխարենը պետք էր ինչ-որ բան տալ: ԱՄՆ-ը խոստացավ զենք մատակարարել և ապահովել նրանց ռազմաքաղաքական անվտանգությունը հնարավոր թշնամիներից: Գործն արված էր: Միացյալ Նահանգները խթանեց և ապահովեց պահանջարկը դոլարի նկատմամբ՝ նավթի նկատմամբ պահանջարկի միջոցով:

Եվ այդ պահանջարկը, ինչպես նաև տպագրական մեքենայից արգելակի վերացումը Միացյալ Նահանգներին թույլ տվեցին իրագործել այբնիկոսների դարավոր երազանքը՝ օդից փող շինել՝ անասան քանակությամբ թողարկել ոչնչով չապահովագրված դոլարներ:

Ռոբշիլդները՝ Ռոկֆելլերների դեմ

- Ի՞նչ էք կարծում, որքա՞ն է գոյատևելու այս խաբեությունը:

- Ես կարծում եմ՝ ոչ երկար: Աշխարհը հոգնել է դրանից: Փոխարենը ի՞նչ է առաջարկվելու, դժվար է գուշակել: Բայց համոզված եմ հիմնական տարբերակներից մեկը ոսկու ստանդարտի վերածնունդն է, այսինքն՝ թողարկված թղթադրամը պետք է ապահովված լինի ոսկով: Այս տարբերակի վրա պնդում են Ռոբշիլդները՝ ֆինանսիստների հզորագույն մի խմբավորում, որոնց անդամները կարող են նաև ազգակցական կապ չունենալ լեգենդար տոհմի հետ:

Սակայն ոսկյա ստանդարտը վերածնելու համար պետք է, որ ինչ-որ մի երկիր առաջինը վերականգնի այն: Այսօր աշխարհի ոսկու ամենախոշոր պաշարը կենտրոնացված է Չինաստանի ժողովրդական բանկում: Ամենայն հավանականությամբ Ռոբշիլդները մտադիր են կանգ առնել հենց Չինաստանի վրա: Սակայն նրանց ակտիվորեն դիմադրում են Ռոքվելլերները: Նրանց կալվածքը Մերձավոր Արևելքի նավթն է և ԱՄՆ-ի տարածքում գիշեր-ցերեկ աշխատող և անհաշիվ դոլար թողարկող տպագրական հաստոցը:

Ի միջի այլոց, բանկիր-կոսմոպոլիտների համար նշանակություն չունի, թե որտեղ է գտնվում տպագրական մեքենան: Գլխավորն այն է, որ լավ պահպանվի: Դրա համար էլ կարելի է ասել. «Ամերիկյան դոլարի ապահովությունն իրագործում են ԱՄՆ-ի ավիակիրները և ռմբակոծիչները»:

Վիկտորիա ԳՈՒԴԿՈՎԱ
«Արգունների ի Ֆակտի»

Խոր Վիրապը անգլիական ոռոգի խմբի ալբոմի շապիկին

Բրիտանա-ամերիկյան նշանավոր «Ռեյնբոու» ոռոգի խմբի այս տարի թողարկած «Փոթորիկը» (The Storm) ձայնագրի շապիկին պատկերված է Խոր Վիրապի վանքը: Ալբոմի երգերի մեջ չկա հայկական որևէ առնչություն, խմբին հավանաբար պարզապես գրավել է հայկական եկեղեցական ճարտարապետությունը:



«Ռեյնբոուն», որ հայտնի է նաև «Ռիչի Բլաքմորի Ռեյնբոուն» անունով, նրա ղեկավար՝ կիթառահար Ռիչի Բլաքմորի անունով, ստեղծվել է 1975 թվականին և ընդմիջումներով ակտիվ է մինչև օրս: Սա խմբի իններորդ ալբոմն է:

Ա. Բ.

Եբրայերենի այբուբենը Թուրքիայում ներկայացվել է որպես ուլդուրերենի այբուբեն

Թուրքիայի կրթության նախարարության կողմից հանրակրթական դպրոցներին բաժանված 6-րդ դասարանի աշակերտներին ուսուցանվող «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում սխալ է հայտնաբերվել: Պարզվել է, որ հիշյալ դասագրքում եբրայերեն այբուբենը հրամցվել է որպես ուլդուրական այբուբեն, մինչդեռ սենական լեզվախմբից սերող եբրայերենը Իսրայելի պետական լեզուն է, իսկ ուլդուրերենը՝ թուրքական լեզվախմբի լեզուներից մեկը: Թուրքիայի գորղների միության նախագահ Մեհմեթ Դողանը սոցցանցում արած գրառմամբ իր դժգոհությունն է հայտնել այդ կապակցությամբ: «Կրթության նախարարության պաշտոնական դասագրքերն անորակ են, թուրքերենը՝ լի սխալներով: 1 մլն 340.000 տպաքանակով հրատարակված դասագրքերում ուլդուրերեն այբուբենի փոխարեն եբրայերենն է ներկայացվել»: Թեմային անդրադարձել է նաև պրոֆեսոր, պատմաբան Միմեթ Շիմշիրգիլը: Նրա խոսքով՝ նման խայտառակության համար պետք է կազմալուծվի Թուրքիայի կրթության և դաստիարակչական խորհուրդը:

Գիտնականներն ինֆարկտի նոր պատճառ են նշել

Ելի համալսարանի, Չեյնհոլցի անվան կենտրոնի և Աուգսբուրգի համալսարանական կլինիկայի գիտնականները պարզել են, որ աղտոտված օդում հանդիպող գերմանր մասնիկները (100 նանոմետր), որոնց հիմնա-

կան աղբյուրը քաղաքում ավտոմոբիլների արտանետումներն են, կարող են սրտանկանի ինֆարկտ հրահրել:

Հետազոտողները եկել են այն եզրակացությանը, որ օրգանիզմի վրա ներգործության առաջին մի քանի ժամվա ընթացքում մասնիկները, որոնք հեշտությամբ թափանցում են արյան մեջ, կարող են առաջացնել սրտի հետ կապված լուրջ խնդիրներ: «Աշխատանքը հաստատում է այն, ինչի մասին կռահում էինք երկար ժամանակ. աղտոտված օդի մանրագույն մասնիկները կարող են ազդեցություն գործել սրտի լուրջ հիվանդության զարգացման վրա: Դա հատկապես ակտուալ է առաջին մի քանի ժամվա ընթացքում», - հայտարարել է հետազոտության առաջին հեղինակ, Ելի համալսարանի դոցենտ Կայ Չեյնը: Նա ընդգծել է, որ գերմանր մասնիկների բարձր մակարդակներն անհանգստություն են առաջացնում հանրային առողջապահության տեսակետից: Հետազոտությունն ընդգրկել է զրեթե վեց հազար մարդու, որոնք ինֆարկտ են տարել 2005-ից մինչև 2015 թվականը, հաղորդել է ՌԻԱ Նովոստին:



Huawei-ը կթողարկի սմարթֆոն՝ գրաֆենային գերկուպակիչով

Huawei-ի հաջորդ ֆլագմանային սմարթֆոնը կթողարկվի գրաֆենային կուտակիչով:

Գրաֆենի օգտագործումը թույլ կտա ավելացնել մարտկոցի ունակությունն առանց դրա չափերի մեծացման: Նաև նորաստեղծական նյութը սմարթֆոնի կուտակիչին կօգնի ավելի արագ լիցքավորվելու: Ինսայդերը հայտնում է, որ գրաֆենային մարտկոցով առաջին ապարատը կդառնա Huawei P40-ը, որը կստանա 5500 միլիամպեր-ժամ ունակությամբ կուտակիչ:

Սարքը կօգտագործի 50 վատ հզորությամբ սնուցման ադապտեր և կլիցքավորվի մոտավորապես 45 րոպեում: Նաև աղբյուրը հայտնել է, որ ֆլագման P40-ը կստանա 6,5-դյույմանոց OLED -դիսփլեյ՝ 120 հերց նորացման հաճախությամբ, կրկնակի սելֆի-խցիկ և ինմնական խցիկ՝ երեք Leica օբյեկտիվներով և մեկ գույզ օժանդակ տվիչներով: Ապարատը կունենա Kirin 990 շարժական պրոցեսոր՝ 5G օժանդակությամբ:

ԸՆՏԱԶՐԶԻՐ Է

Ամերիկացիները կազմել են հոգևածություն առաջացնող սննդամթերքի ցանկ

Ամերիկացի գիտնականները լուրջ հետազոտությունից հետո եկել են այն եզրակացության, որ պահանջարկ ունեցող սննդամթերքներից մի քանիսը անբարենպաստ հետևանք են ունենում մարդու աշխատունակության վրա և առաջացնում են քնկոտություն: Այդ ցուցակում, որից մարդ հոգնած և թուլացած է զգում, հայտնվել են այն մթերքները, որոնք հաճախ գնում են սուպերմարկետից: Առաջին տեղում են ոգելից ըմպելիքները, որոնք առաջացնում են քնկոտություն: Այնուհետև գալիս է քաղցրավենիքը՝ փոխելով գլյուկոզայի չափը արյան մեջ և հոգևածություն առաջացնելով, երրորդ տեղում է հնդկահավի միսը: Գիտնականները պարզել են, որ նրա մեջ պարունակվող սպիտակուցները իջեցնում են աշխատունակությունը: Արագ հոգևածություն է առաջ բերում նաև ալյուրից պատրաստված խմորեղենը, այդ թվում՝ սպիտակ ալյուրից պատրաստված մակարոնեղենը: Օրգանիզմը այդ ամենը մարսելու համար ծախսում է երկար ժամանակ:

Սուրճը վերականգնում է հիշողությունը

Սուրճի սիրահարները ունեցան ևս մեկ հիմնավորում իրենց նախասիրությունը պաշտպանելու համար

Գիտնականները, մկների վրա գիտափորձեր կատարելով հաստատեցին, որ կոֆեինը վերադարձնում է հիշողությունը՝ Ալցզեյմերի հիվանդության (ծերունական տկարամտության) դեպքում: Այս մասին գրում է aysor.am-ը, վկայակոչելով «Ռիա Նովոստի» գործակալությունը:



Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ կոֆեինի օգտագործումը վաղ հասունացման շրջանում հեռացնում է հիշողության հետ կապված խնդիրների առաջացումը մկների մոտ: «Նոր տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ կոֆեինը կարող է բուժիչ միջոց հանդիսանալ Ալցզեյմերի հիվանդության վաղ շրջանում», - նշել է Հարավային Ֆլորիդայի համալսարանում իրականացրած գիտափորձի հեղինակ Գերի Էրենդաշը:

Հիմնվելով մկների վրա անցկացված արդյունավետ փորձերի արդյունքների վրա, գիտնականները նախատեսում են փորձն իրականացնել նաև մարդկանց շրջանում: Մի քանի տարի առաջ Էրենդաշն ու իր գիտախումբը հետաքրքրություն ցուցաբերեցին կոֆեինի հանդեպ՝ որպես Ալցզեյմերի հիվանդության համար բուժիչ միջոց, և փորձի իրականացումից հետո պարզվեց, որ ավելի շատ կոֆեին օգտագործող մարդկանց մոտ փոքրանում է նյարդախտաբանական հիվանդությունների վտանգը:

Փորձաքննության ենթարկվեց 55 մուկ՝ ենթարկված գենետիկական այնպիսի փոփոխությունների, որոնց մոտ ժամանակի ընթացքում առաջանում էին հիշողության հետ կապված խնդիրներ՝ նրանց մի մասին օրական 5 անգամ տալով կոֆեինով 200 գ ջուր:

2 ամիս անց կոֆեին ստացած մկների մոտ ակնհայտորեն նկատվեց հիշողության բարելավում, և անգամ նրանք արդեն կարող էին համեմատվել նորմալ մկների հետ: Միևնույն ժամանակ սովորական, այսինքն՝ առանց կոֆեինի ջուր ստացած մկների մոտ արդյունքները անբավարար էին:

Գիտնականները նաև ենթադրում են, որ կոֆեինը ճնշում է բորբոքային ռեակցիաները ուղեղում, ինչն էլ նպաստում է դրա աշխատանքի բարելավմանը: Նշենք, որ Ալցզեյմերի հիվանդությունը, որը, որպես կանոն, առաջանում է ծերունական տարիքում, հանդիսանում է կենտրոնական նյարդային համակարգի անխտաբանական հիվանդություն, որն էլ բնորոշվում է ինտելեկտի իջեցմամբ, հիշողության կորստով և վարքի փոփոխությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի կազմում ստեղծվել է հնէաբուսաբանության բաժին, ինչի հետ կապված ինստիտուտը հայտարարում է մրցույթ հնէաբուսաբանության բաժնի վարիչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար: Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն. ա) կենսաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան, բ) գիտական գործունեության առնվազն 10 տարվա փորձ, գ) վերջին 5 տարվա ընթացքում հեղինակ են առնվազն գիտական 10 աշխատության:

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի բաժնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. գրավոր դիմում,
2. երկու լուսանկար՝ 3x4 չափի,
3. քաղվածք աշխատանքային գրքույկից,
4. ինքնակենսագրություն,
5. անձնագրի պատճեն,
6. թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթ,
7. կադրերի հաշվառման անձնական թերթիկ լրացված,
8. բնութագիր վերջին աշխատավայրից,
9. հրատարակված աշխատությունների ցանկ հաստատված համապատասխան կարգով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտքարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում (բացի շաբաթ և կիրակի օրերից):

Հասցեն՝ ք. Երևան 0063, Աճառյան փ. 1, հեռախոս՝ (010) 628211, (+374) 94147775:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 30.01.2020 թ.:

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА